ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Դատական պաշտպանության իրավունքը բնութագրվում է որպես մարդու և քաղաքացու անօտարելի իրավունք, նրա մյուս իրավունքներն ու ազատություններն ապահովող երաշխիք, նաև որպես *օրենքով սահմանված ժամկետներում և կարգով* դատարան, այդ թվում՝ վերաքննիչ ատյան մուտք գործելու և լիարժեք պաշտպանություն ստանալու հնարավորություն (ՀՀ սահմանադրական դատարանի 27. 05. 2008 թ. ՍԴՈ-754 և 08. 10. 2008 թ. ՍԴՈ-765 որոշումներ): Հետևաբար, վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացումն առաջին հերթին պայմանավորված է օրենքով սահմանված բողոքարկման կարգի պահպանմամբ, քանի որ միայն այդ պարագայում է հնարավոր ցանկալի իրավական հետևանքների առաջացումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ նաև ՀՀ ՔԴՕ) սահմանված վերաքննիչ բողոքարկման կարգի խախտումը հանգեցնում է վերաքննիչ բողոքը վերադարձնելուն, այսինքն՝ օրենսդիրը վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացման պայմանները խախտելու համար նախատեսել է միայն մեկ դատավարական հետևանք: Այսպես՝ ՀՀ ՔԴՕ 213 հոդվածը սահմանում է, որ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե

- չեն պահպանվել վերաքննիչ բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող ՀՀ ՔԴՕ 210 հոդվածի պահանջները,
- վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին, կամ նման միջնորդությունը չի բավարարել դատարանը,
- մինչև վերաքննիչ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը բողոք բերած անձից բողոք[1] է ստացվել այն հետ վերցնելու մասին,
- բողոքը ներկայացրել է այն անձը, ով ստորադաս դատարանի դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի,
- բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման, գործին մասնակցող անձանց միջև առկա է վերաքննության իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնություն, և նման համաձայ-

[1] Հոդվածում կիրառվել է «բողոք» եզրույթը, սակայն, մեր կարծիքով, այս պարագայում տեղին է նաև «դիմում» բառի գործածումը:

նություն կնքած մյուս կողմը չի համաձայնվել գործը վերաքննիչ դատարանում քննելու վերաբերյալ:

Վերաքննիչ դատարանը գործը ստանալու օրվանից հետո եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին: Որոշման մեջ նշվում են բողոքում թույլ տրված բոլոր առերևույթ խախտումները: Նման որոշման դեպքում բողոք բերող անձին պատշաճ ուղարկվում է միայն վերաքննիչ դատարանի որոշումը: Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և որոշումը ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետում կրկին ներկայացնելու դեպքում բողոքը համարվում է դատարանում ընդունված: Բողոքը կրկին ներկայացվելու դեպքում խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի սահմանվում: Ընդ որում, բողոքը վերադարձնելու մասին վերաքննիչ դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով՝ որոշումը ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետում:

Օրենսդրի նման մոտեցմանը համաձայնել չի կարելի: Վերաքննիչ դատարանը փաստորեն վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին որոշում կայացնելու իրավազորությամբ օժտված չէ: Ճիշտ է, վերաքննիչ ատյանը ՔԴՕ 213 հոդվածի 1-ին մասի 2-6-րդ կետերով նախատեսված հիմքերով վերադարձնում է վերաքննիչ բողոքը՝ առանց այն կրկին ներկայացնելու համար ժամկետ սահմանելու, ինչը գործնականում բացառում է բողոքարկողի՝ վերաքննիչ բողոք բերելու նոր հնարավորությունը: Սակայն, մեր կարծիքով, օրենսդիրը թույլ է տվել երկու սխալ՝

- հոդվածում չի արտացոլել ՔԴՕ 208 հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը չգերազանցող գույքային պահանջով վերաքննության անթույլատրելիության մասին դրույթը (որը, ինչպես և վերաքննության իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնությունը, մեր կարծիքով, հակասահմանադրական է),
- չի տարանաջատել վերաքննիչ բողոքարկման իրավունքի նախադրյալները և վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացման պայմանները, որոնք հանգեցնում են տարբեր քաղաքացիադատավարական հետևանքների առաջացման:

Վերաքննիչ բողոքարկման իրավունքը ենթադրում է ինչպես վերաքննիչ ատյան դիմելու, այնպես էլ օրինական և հիմնավորված պահանջների բավարարում ստանալու իրավունքը: Վերաքննիչ դատարան դիմելու իրավունքի իրականացման հետևանքը դատարանի կողմից վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելն է, իսկ պահանջի բավարարման իրավունքի իրականացման հետևանքն այն է, որ վերաքննիչ դատարանը բավարարում է բողոքը: Վերաքննիչ դատարան դիմելու իրավունքի բացակայությունը հանգեցնում է բողոքը վերադարձնելուն, իսկ պահանջի բավարարման իրավունքի բացակայությունը՝ բողոքը մերժելուն: Վերոգրյալից հետևում է, որ վերաքննիչ ատյան դիմելու և պահանջի բավարարման իրավունքները տարբեր են ինչպես իրենց բովանդակությամբ, այնպես էլ ծագման հիմքերով ու իրականացման հետևանքներով: Այս երկու իրավունքները միաժամանակ պատկանում են նույն սուբյեկտին, և մեկի գոյությունն առանց

մյուսի անիմաստ է: Առանց վերաքննիչ ատյան բողոք ներկայացնելու, բողոքարկողը չի կարող իրականացնել իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Ուստի այս երկու իրավունքները պետք է դիտարկել փոխկապվածության մեջ, որոնց միաժամանակյա գոյությունն էլ հենց կազմում է վերաքննիչ բողոքարկման իրավունքի բովանդակությունը: Այս առումով բավականին ընդհանրություններ կան հայցի իրավունքի և վերաքննիչ բողոքարկման իրավունքի բովանդակությունների միջև, քանի որ հայցի իրավունքը դատավարագիտությունում բնորոշվում է որպես քաղաքացիական գործի ելքում իրավաբանական շահագրգռվածություն ունեցող անձի, այսինքն՝ պատասխանողի հետ հայցվորի ունեցած նյութահիրավական վեճի քննության, լուծման և իր խախտված կամ վիճարկվող սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության խնդրով դատարան դիմելու ու իր հիմնավորված պահանջների բավարարում ստանալու՝ օրենքով ամրապնդված հնարավորություն[2]: Հայցի իրավունքը ոչ թե հայցվորի խախտված կամ վիճարկվող իրավունքն է, այլ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը որոշակի դատավարական կարգով իրականացնելու հնարավորությունը:

Սակայն հայցի իրավունքի և վերաքննիչ բողոքարկման իրավունքի բովանդակությունները չեն նույնանում: Հայցի իրավունքը ներառում է երկու կողմ՝ դատավարական, որը ենթադրում է դատարան դիմելու իրավունք, և նյութահիրավական, որը ենթադրում է օրինական և հիմնավորված հայցապահանջների բավարարում ստանալու իրավունք: Փաստորեն, հայցի իրավունքը հանդես է գալիս որպես նյութական և դատավարական փոխկապված իրավունքների ինստիտուտ: Վերաքննիչ բողոքարկման իրավունքի բովանդակության մեջ գերակշռում են դատավարական տարրերը: Ընդ որում՝ ասվածը վերաբերում է ոչ լրիվ վերաքննությանը, քանի որ լրիվ վերաքննության պարագայում վերաքննիչ ատյանն ամբողջ ծավալով, գործում եղած, ինչպես նաև լրացուցիչ ներկայացրած ապացույցների հիման վրա կրկնակի և ըստ էության քննում է գործը՝ արդյունքում կայացնելով վճիռ, որն անմիջականորեն ուղղված է վիճելի նյութական իրավահարաբերությունների կարգավորմանը: Ուստի լրիվ վերաքննության պարագայում վերաքննիչ բողոքարկման իրավունքի բովանդակությունից բխում են վերաքննիչ դատարան դիմելու, օրինական և հիմնավորված պահանջների բավարարման իրավունքները, որոնք միաժամանակ զուգորդվում են առաջին ատյանի դատարանի ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելու պահանջով: Ոչ լրիվ վերաքննության պարագայում վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացումը դրսևորվում է առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու պահանջով վերաքննիչ ատյան դիմելու և օրինական ու հիմնավորված պահանջների բավարարման իրավունքներում: Սակայն բողոքում ներկայացված պահանջն այս դեպքում կրում է զուտ դատավարական բնույթ և, ի տարբերություն նախորդ դեպքի, պահանջի բավարարումն անմիջականորեն նյութահիրավական

[2] Տե՛ս **Ռ. Գ. Պետրոսյան,** Հայաստանի քաղաքացիական դատավարություն, երրորդ հրատարակություն, Եր., 2007, էջ 317-318:

հետևանքներ չի առաջացնում: Այսպես՝ վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջը, համապատասխանելով վերաքննիչ դատարանի՝ ՔԴՕ 221 հոդվածով նախատեսված լիազորություններին (վերաքննիչ դատարանից կարելի է պահանջել միայն այն, ինչի համար վերջինս օրենքով լիազորված է ուղղակիորեն), կրում է դատավարական բնույթ, և բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարելու կամ մերժելու վերաբերյալ վերաքննիչ դատարանի որոշումն առաջացնում է դատավարական հետևանքներ: Վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի բավարարումը կարող է նյութաիրավական հետևանքներ առաջացնել և վիճելի իրավահարաբերությունը կարգավորել միայն այն դեպքերում, երբ վերաքննիչ ատյանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և հաստատում կողմերի հաշտության համաձայնությունը, մասնակիորեն բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից, ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մասը (ՔԴՕ 221 հոդվ., 1-ին մաս, 3-5-րդ կետեր): Հետևաբար, վերաքննիչ բողոքարկման իրավունքն առավելապես դրսևորվում է դատավարական նորմերում: Ճիշտ է, առաջին ատյանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ հնարավոր է վերաքննիչ բողոք բերել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերի խախտումների հիմքով, սակայն չպետք է մոռանալ, որ նյութական իրավունքի խախտումները վերագրվում են դատարանին, և բողոքարկողն ընդամենը ներկայացված պահանջը հիմնավորում է այն համագամանքով, որ առաջին ատյանի դատարանը կիրառել է այն օրենքը, որը չպետք է կիրառեր, չի կիրառել այն օրենքը, որը պետք է կիրառեր կամ սխալ է մեկնաբանել օրենքը (թույլ է տվել նյութական իրավունքի խախտում), ինչի հետևանքով խախտվել է իր՝ արդար դատաքննության իրավունքը: Ուստի վերաքննիչ բողոքարկման իրավունքը դրսևորվում է նաև առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տված խախտումներին իրավաբանական գնահատական տալու պահանջով:

ՀՀ ՔԴՕ դրույթների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ ամեն դեպքում հնարավոր է առանձնացնել վերաքննիչ բողոքարկման իրավունքի տարրերը՝ վերաքննիչ ատյան դիմելու և օրինական ու հիմնավորված պահանջների բավարարման իրավունքները: Ընդ որում, միաժամանակ հնարավոր է վերաքննիչ բողոքարկման իրավունքի նախադրյալները սահմանազատել վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացման պայմաններից, որոնց խախտումը պետք է քաղաքացիադատավարական տարբեր հետևանքներ առաջացնի: Մինչդեռ դատավարության օրենքում վերաքննիչ բողոքարկման իրավունքի նախադրյալները և բողոքարկման իրավունքի իրականացման պայմանները խախտելու քաղաքացիադատավարական հետևանքները նույնացվել են:

Վերաքննիչ բողոքարկման իրավունքի նախադրյալներն այն իրավաբանական փաստերն ու հանգամանքներն են, որոնց առկայության կամ

բացակայության հետ է դատավարության օրենքը կապում անձի համար վերաքննիչ բողոքարկման իրավունքի ծագումը կամ դրա իրականացման հնարավորությունը: Հայց հարուցելու իրավունքի նախադրյալների անալոգիայով վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացման նախադրյալները ևս կարելի է բաժանել դրականի և բացասականի՝ դրական համարելով այն հանգամանքները, որոնց առկայության հետ օրենսդիրը կապում է անձի համար վերաքննիչ բողոքարկման իրավունքի ծագումը, բացասական համարելով այն նախադրյալները, որոնց բացակայությունն է անձի համար առաջացնում վերաքննիչ բողոք բերելու հնարավորություն:

Նախևառաջ վերաքննիչ բողոքարկման հնարավորությունն ուղղակիորեն կախված է հայց հարուցելու իրավունքի իրականացման նախադրյալներից, քանի որ դրանց խախտումն ընդհանրապես քաղաքացիական դատավարությունը բացառող հանգամանք է: Ուստի հայց հարուցելու իրավունքի իրականացման նախադրյալների առկայությունն անհրաժեշտ է, որպեսզի անձը, հայց հարուցելով, առաջին ատյանի դատարանում հանդես գա որպես կողմ, ինչի արդյունքում էլ հետագայում հնարավորություն է ունենում իրականացնելու վերաքննիչ բողոքարկման իրավունքը: Սակայն հայց հարուցելու իրավունքի իրականացմամբ վերաքննիչ բողոքարկման իրավունքի նախադրյալների բովանդակությունը չի կարող սպառվել, քանի որ հայց հարուցողից[3] (հայցվորից) բացի վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունքով են օժտված գործին մասնակցող բոլոր անձինք, այդ թվում՝ պատասխանողը և երրորդ անձինք, դատախազը՝ օրենքով նախատեսված դեպքերում, և գործին մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

Ուստի վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացման համար անհրաժեշտ են հայց հարուցելու իրավունքի նախադրյալները՝

- անձը պետք օժտված լինի դատավարական իրավունակությամբ, այսինքն՝ վարույթի կողմ լինելու ունակությամբ,
- հայցվորի դիմումը պետք է ենթակա լինի դատարանի քննությանը (ՔԴՕ 15 և 16 հոդվածներ, 91 հոդվածի 1-ին մասի 1-ին կետ),
- հայց հարուցելու իրավունքը բացակայում է, եթե նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, այդ թվում՝ գործի վարույթը կարճելու մասին վճիռ, ինչպես նաև, երբ հայցվորը դատաքննության փուլում հրաժարվել է հայցից, կամ եթե առկա է առևտրային արբիտրաժի վճիռ կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշում, բացառությամբ դատարանի կողմից առևտրային արբիտրաժի վճռի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման հա-

[3] ՀՀ ՔԴՕ 110-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի վարույթի կարճման դեպքում նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ չի թույլատրվում կրկին դիմել դատարան, բացառությամբ այն դեպքի, երբ հայցվորը հայցից հրաժարվել է դատաքննության նախապատրաստական փուլում:

մար կատարողական թերթ տալը մերժելու դեպքի (մեր կարծիքով, բացառություն պետք է համարել նաև իրավասու դատարանի կողմից արբիտրաժային վճիռը կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու դեպքը)[4],

- գործով քաղաքացիական դատավարությունը բացառող հանգամանք է նաև, երբ կողմերից մեկը հղում է կատարում տվյալ վեճն արբիտրաժային դատարանի քննությանը հանձնելու՝ կողմերի միջև առկա համաձայնությանը, և արբիտրաժային դատարան դիմելու հնարավորությունը չի վերացել (ՔԴՕ հոդվ. 103, մաս 3)[5],
- ամուսինը կնոջ հղիության ժամանակ կամ երեխան ծնվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, առանց կնոջ համաձայնության ամուսնալուծության դիմում դատարան չի կարող ներկայացնել (ՔԴՕ հոդվ. 92, մաս 1, կետ 8)[6]:

Հարկ է նշել, որ հայցի իրավունքի նախադրյալներն անհրաժեշտ են միայն առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննիչ բողոքարկման համար: Միջանկյալ դատական ակտերի վերաքննիչ բողոքարկման պարագայում դրանք որևէ իրավական արժևորում չունեն:

Օրենսդիրը, միայն օրենքով սահմանված դեպքերում հնարավոր համարելով միջանկյալ դատական ակտերի վերաքննիչ բողոքարկումը, միաժամանակ նախատեսել է առաջին ատյանի դատարանի միջանկյալ այնպիսի դատական ակտերի բողոքարկում, որոնք դատարանը կայացնում է հենց գործով քաղաքացիական դատավարության իրականացումը մերժելու համար (հայցադիմումի ընդունումը մերժելու, հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումները (ՔԴՕ հոդվ. 91, 92)): Այսինքն՝ օրենսդրորեն ամրագրվել է հարուցված քաղաքացիական գործի բացակայության պայմաններում միջանկյալ դատական ակտի վերաքննիչ բողոքարկման հնարավորություն, որի հետևանքով վերանայվում և վերաքննության օբյեկտ է հանդիսանում առաջին ատյանի դատարանի համապատասխան որոշումը:

Վերաքննիչ բողոքարկման իրավունքի նախադրյալներն են՝

- վերաքննիչ բողոք բերելու իրավունքի առկայությունը՝ անձը, ընդգրկված չլինելով ՔԴՕ 205 հոդվածով նախատեսված սուբյեկտների շարքում, ուղղակիորեն զրկված է վերաքննիչ բողոքարկման հնարավորությունից, և նրա ներկայացրած վերաքննիչ բողոքները վարույթ չեն ընդունվում,
- բողոքարկել կարելի է միայն ՔԴՕ և այլ օրենքներով նախատեսված՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերը: Հակառակ պարագայում վերաքննությունը ևս բացառվում է.

---

[4] Տե՛ս «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի հոդված 34 (ՀՕ-55-Ն, ՀՀՊՏ, № 8 (582), 31.01.07), նաև՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի հոդվածներ 16-17 (ՀՕ-123-Ն, ՀՀՊՏ (637), 2008. 07. 23/47):

[5] Թեև արբիտրաժային համաձայնության առկայությունն ինքնին չի խոչընդոտում դատարան դիմելու իրավունքի իրականացման արդյունքում քաղաքացիական գործ հարուցելուն, այնուամենայնիվ, դրան հղում անելով, կողմը բացառում է գործով քաղաքացիական դատավարության հետագա իրականացումը, որն իր ազդեցությունն է թողնում նաև վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացման վրա:

[6] Քանի որ կնոջ հղիությունը ժամանակավոր պրոցես է, ապա դատավարության օրենքն այն նախատեսել է հայցադիմումը վերադարձնելու հիմքերի շարքում, որպեսզի կնոջ հղիությունը դադարելուց կամ երեխայի ծնվելուց մեկ տարի հետո ամուսինը հնարավորություն ունենա կրկին դիմելու դատարան:

• գույքային պահանջով քաղաքացիական գործով վերաքննությունը թույլատրելի է միայն, եթե տվյալ գործով վեճի առարկայի արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը (ՔԴՕ 208 հոդվածի 2-րդ մաս),

• կողմերի միջև պետք է առկա չլինի առաջին ատյանի դատարանում կնքված՝ վերաքննության իրավունքից հրաժարվելու մասին համաձայնություն, կամ նման համաձայնության պարագայում պետք է առկա լինի մյուս կողմի համաձայնությունը՝ վերաքննիչ բողոքը դատարանի կողմից քննության առնելու վերաբերյալ (ՔԴՕ 208 հոդվածի 1-ին մաս):

Թվարկված նախադրյալներից առաջին երեքը դրական են, քանի որ օրենսգիրքը դրանց առկայության հետ է կապում վերաքննության հնարավորությունը, իսկ վերջինը՝ բացասական: Ընդ որում՝ վերջին բացասական նախադրյալն իր մեջ պարունակում է նաև դրական պայման, այն է՝ վերաքննության իրավունքից հրաժարվելու մասին համաձայնության առկայության դեպքում (որը վերաքննությունը բացառող հանգամանք է) վերաքննիչ բողոքը դատարանի կողմից ենթակա կլինի քննության միայն այդ մասին մյուս կողմի համաձայնության դեպքում: Մյուս կողմի համաձայնությունը դրական պայման է, քանի որ օրենսգիրքը վերաքննության թույլատրելիությունը պայմանավորում է նման համաձայնության առկայությամբ:

Ինչպես գիտենք, վերաքննիչ բողոքարկման իրավունքի առկայությունը բավարար չէ բողոքարկման իրավունքի լիարժեք իրականացման և դրա արդյունքում համապատասխան քաղաքացիադատավարական հետևանքների առաջացման համար: Անհրաժեշտ է, որ բողոքարկողը ճիշտ իրականացնի վերաքննիչ ատյան դիմելու իրավունքը, իսկ դատարանը բողոքը վարույթ ընդունի օրենքին համապատասխան: Դատարանը նման որոշում կարող է կայացնել, եթե բողոքը վարույթ ընդունելիս ստուգում և պարզում է, որ անձը վերաքննիչ բողոքարկման իրավունք ունի, այսինքն՝ առկա են վերաքննիչ բողոքարկման իրավունքի նախադրյալները և պահպանվել են վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված կանոնները՝ պայմանները:

ՀՀ ՔԴՕ-ի՝ վերաքննիչ վարույթը կարգավորող նորմերի վերալուծության արդյունքում կարող ենք առանձնացնել վերաքննիչ բողոք բերելու իրավունքի իրականացման հետևյալ պայմանները՝

• վերաքննիչ բողոքը ներկայացվում է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան (ըստ պատշաճ ընդդատության),

• բողոքարկողի գործունակությունը: Առաջին ատյանի դատարանի դատական ակտերը կարող է բողոքարկել կամ վերաքննիչ բողոք բերելը ներկայացուցչին հանձնարարել միայն լրիվ գործունակ անձը: Անգործունակների կամ սահմանափակ գործունակների իրավունքներն իրականացնում են նրանց օրինական ներկայացուցիչները (ՔԴՕ հոդվ. 43): Ընդ որում՝ անգործունակի վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմք ՀՀ ՔԴՕ 213 հոդվածը չի նախատեսում, սակայն նման իրավիճակը վերաքննիչ վարույթում բացառվում է, քանի որ վերաքննիչ բողոք բերողն առաջին ատյանի դատարանում հանդես է գալիս որպես գործին մասնակցող անձ, իսկ գործին մասնակից չդարձված անգործունակ կամ սահմանափակ գոր-

ծունակ անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության լուծող ակտ, բողոքարկումը կարող են իրականացնել միայն օրինական ներկայացուցիչների միջոցով: Այս մասով ստացվում է, որ վերաքննիչ բողոք կարող են ներկայացնել նաև անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձինք, քանի որ ՔԴՕ-ն վերաքննիչ բողոքը վերադարձնելու նման հիմք չի սահմանում, և, ըստ էության, անգործունակի կամ սահմանափակ գործունակի կողմից իրականացված գործողությունը քաղաքացիադատավարական հետևանք է առաջացնում: Այս դեպքում դատարանը պետք է բողոքն ընդունի վարույթ, սակայն անգործունակության կամ սահմանափակ գործունակության հանգամանքը պարզելով, օրինական ներկայացուցչին ընդգրկի վարույթ, որպեսզի վերջինս իրականացնի վերաքննիչ ատյանում համապատասխան սուբյեկտի իրավունքների պաշտպանությունը, իսկ օրինական ներկայացուցչի հրաժարվելու դեպքում՝ տեղեկացնի անգործունակների կամ սահմանափակ գործունակների իրավունքների պաշտպանության իրավասությամբ օժտված պատկան մարմիններին, օրինակ՝ խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու նկատառումներով: Պետք է նշել նաև, որ գործնականում անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձանց կողմից վերաքննիչ բողոքարկումը գրեթե բացառվում է, քանի որ ՀՀ ՔԴՕ-ն այնպիսի պայմաններ է սահմանում բողոքարկման իրավունքի իրականացման համար, որ ի սկզբանե նման իրավիճակները դառնում են անհնարին,

- վերաքննիչ բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները պահպանելը,
- պետական տուրքի վճարումը: ՀՀ-ում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ՝ օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի պետական բյուջե մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է («Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի հոդված 2)[7]: Հետևաբար, վերաքննությունը՝ որպես քաղաքացիական շրջանառության մասնակիցների ներկայացրած վերաքննիչ բողոքների հիման վրա օրենքով սահմանված կարգով վերաքննիչ դատարանի կողմից լիազորության իրականացում, ներառվել է պետական տուրքի գանձման օբյեկտների շրջանակ, և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9 հոդվածի 8-րդ մասով սահմանվել է, որ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի դեմ բերվող վերաքննիչ բողոքների համար պետական տուրքը գանձվում է՝ գույքային պահանջի գործերով՝ վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի 3 տոկոսի չափով, իսկ եթե վիճարկում են առաջին ատյանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ կամ դրանք չեն վիճարկվում՝ ապա առաջին ատյանի դատարան հարուցված և բողոքարկվող հայցի գնի 3 տոկոսի չափով: Ոչ գույքային պահանջի գործերով պետական տուրքը գանձվում է բազային տուրքի տասնապատիկի չափով, հատուկ վարույթի գործերով՝ ութապատիկի չափով:

[7] Տե՛ս ՀՕ-186, ՀՀՊՏ, 1998. 01. 11/1:

Դատական ակտերի վերաքննության համար պետական տուրքի գանձման պրակտիկայում առաջ են եկել որոշակի խնդիրներ, որոնք իրենց կարգավորումն են ստացել «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-73 հոդվածներով և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը կիրառելու դատական պրակտիկայի մասին» ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 27. 04. 1999 թ. № 8 որոշմամբ:

ՀՀ ՔԴՕ-ի՝ դատական ծախսերի ինստիտուտը կարգավորող նորմերը և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը դատարաններում ճիշտ կիրառելու և դատական հնարավոր սխալներից խուսափելու նպատակով ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը պարզաբանել է, որ պետական տուրքը գանձվում է մինչև համապատասխան ծառայության մատուցումը կամ գործողության իրականացումը, եթե օրենքով այլ կարգ սահմանված չէ կամ վճարողին պետական տուրքի գծով արտոնություն տրված չէ: «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9 հոդվածի 8-րդ մասի ա) կետում հիշատակված վիճարկվող գումար պետք է դիտել՝

- հայցագինն ամբողջությամբ, եթե վերաքննիչ բողոք է ներկայացվել գույքային պահանջի գործով և բողոքում չի վիճարկվում առաջին ատյանի դատարանի վճռով բավարարված կամ չբավարարված պահանջի չափը, կամ վիճարկվում է հայցապահանջն անբողջությամբ,
- գումարի այն չափը, որը բավարարվել կամ չի բավարարվել առաջին ատյանի դատարանի վճռով և որը վիճարկվում է վերաքննիչ բողոքում:

Քանի որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի ուժով դատական գործով պետական տուրքի գանձումն ապահովելու պարտականությունը կրում է դատարանը, ապա դատարանի կողմից հետաձգված, տարաժամկետած պետական տուրքը բռնագանձելու վերաբերյալ կատարողական թերթը դատարանն ուղարկում է դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ եռօրյա ժամկետում[8]:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի[9] 18 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական թերթը տալիս է ակտն ընդունած առաջին ատյանի դատարանը՝ պահանջատիրոջ կամ նրա հատուկ լիազորված ներկայացուցչի դիմումի հիման վրա: Սակայն քննարկվող դեպքում պահանաջատերը պետությունն է, և քանի որ պետական տուրքն այս պարագայում դատարանի կողմից վերաքննություն իրականացնելու համար պետական բյուջե գանձվող գումար է, ապա առաջին ատյանի դատարանն օրենքի ուժով ապահովում է պետական տուրքի գանձումը՝ եռօրյա ժամկետում կատարողական թերթն ուղարկելով դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն:

---

[8] Տե՛ս «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-73 հոդվածները և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը կիրառելու դատական պրակտիկայի մասին» ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 27. 04. 1999 թ. №8 որոշման 1,11 և 13-րդ կետերը:

[9] Տե՛ս ՀՕ-221, ՀՀՊՏ, №32 (164), 18. 10. 01:

Պետք է նշել նաև, որ ՀՀ վերաքննիչ դատարանի որոշմամբ գործը նոր քննության ուղարկելու դեպքում, ՀՀ ՔԴՕ 68-73 հոդվածների և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի համաձայն, կողմերից պետական տուրքի գանձում չի նախատեսվում[10]:

Վերոգրյալի հիման վրա կարող ենք առանձնացնել վերաքննիչ բողոքարկման իրավունքի նախադրյալները և բողոքարկման իրավունքի իրականացման պայմանները խախտելու քաղաքացիադատավարական հետևանքները և նշել, որ առաջինների խախտման դեպքում վերաքննիչ ատյանը պետք է մերժի վերաքննիչ բողոքի ընդունումը (բողոքի ընդունումը մերժելու իրավասությամբ դատավարության օրենքը վերաքննիչ ատյանին չի օժտել), իսկ բողոքարկման կարգը և պայմանները չպահպանելը պետք է հանգեցնեն դատարանի կողմից վերաքննիչ բողոքը վերադարձնելուն:

Առաջարկում ենք ՀՀ ՔԴՕ-ն լրացնել 213[1] հոդվածով և սահմանել, որ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքի ընդունումը, եթե

1. բողոքը ներկայացրել է այն անձը, ով ստորադաս դատարանի դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի,
2. բողոքարկվել է այն դատական ակտը, որը բողոքարկման ենթակա չէ,
3. վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և դատարանը մերժել է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը,
4. բողոքարկվել է նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը չգերազանցող գույքային պահանջի վերաբերյալ կայացված դատական ակտը (մեր կարծիքով՝ օրենսգրքի այս նորմը հակասահմանադրական է, բայց քանի դեռ այն ուժը կորցրած չի ճանաչվել, ճիշտ կլինի, որ բողոքի ընդունումը մերժելու հիմք հանդիսանա):

Վերաքննիչ դատարանը գործը ստանալու օրվանից հետո եռօրյա ժամկետում կայացնում է պատճառաբանված որոշում վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին: Որոշման մեջ նշվում են բողոքի ընդունումը մերժելու կոնկրետ պատճառները և բողոքարկողի թույլ տված խախտումները:

Վերաքննիչ դատարանի՝ բողոքի ընդունումը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով՝ որոշումը ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետում:

Որոշումը վճռաբեկ դատարանի կողմից վերացվելու դեպքում բողոքը համարվում է ընդունված հենց ներկայացնելու օրը:

---

[10] Տե՛ս «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի» 68-73 հոդվածները և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը կիրառելու դատական պրակտիկայի մասին «ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 27. 04. 1999 թ. №8 որոշումը լրացնելու մասին» ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 16. 08. 2000 թ. թիվ 31 որոշումը: Ընդ որում՝ վերոնշյալ որոշմամբ սահմանվել էր, որ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ գործը վերաքննիչ դատարանի նոր քննության ուղարկելու դեպքում կողմերից պետական տուրքի գանձում չի նախատեսվում, սակայն 2008 թ. քաղաքացիադատավարական օրենսդրական փոփոխությունների արդյունքում վերաքննիչ դատարանը զրկվեց գործն ըստ էության քննելու իրավազորությունից, և, փաստորեն, գործն ըստ էության քննելու գործառույթ ներկայումս իրականացնում են միայն առաջին ատյանի դատարանները: Հետևաբար, այս դրույթը կիրառելի է նաև վերաքննիչ դատարանի որոշմամբ գործն առաջին ատյանի դատարանին նոր քննության ուղարկելու պարագայում:

Առաջարկում ենք նաև ՀՀ ՔԴՕ 213 հոդվածի 1-ին մասը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Վերաքննիչ դատարանը վերադարձնում է վերաքննիչ բողոքը, եթե

1. չեն պահպանվել քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210 հոդվածի պահանջները,

2. վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին,

3. մինչև վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը բողոք բերած անձից դիմում է ստացվել այն հետ վերցնելու մասին,

4. գործին մասնակցող անձանց միջև առկա է վերաքննության իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնություն, և նման համաձայնություն կնքած կողմերից մեկը չի համաձայնվել գործը վերաքննիչ դատարանում քննելու:

Ընդ որում՝ գործող դատավարական օրենսդրությամբ հանդիսանալով վերաքննիչ բողոքարկման իրավունքի նախադրյալ՝ վերաքննիչ բողոքարկման իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնությունը չպետք է հանգեցնի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելուն, քանի որ տեսականորեն չենք կարող բացառել մյուս կողմի համաձայնության ձեռքբերումը: Ուստի վերաքննիչ դատարանը այս հիմքով պետք է վերադարձնի վերաքննիչ բողոքը և երկշաբաթյա ժամկետ տրամադրի բողոքարկողին՝ մյուս կողմի համաձայնությունն ստանալու համար: Մինչդեռ ՀՀ ՔԴՕ 213 հոդվածի գործող շարադրանքում այս կանոնը չի պահպանվել: Ճիշտ կլիներ, որ հակասահմանադրական այս նորմն ընդհանրապես չգործեր, բայց քանի դեռ այն ուժը կորցրած չի ճանաչվել, պետք է դիտարկել միայն վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերի շրջանակներում:

ВАГЕ ОГАНЕСЯН – ***Гражданско-процессуальные последствия нарушения порядка апелляционного обжалования.*** – Предпосылки права на апелляционное обжалование относятся к разным правовым категориям, и их нарушение приводит к разным правовым последствиям в гражданском процессе. Статья 213 гражданско-процессуального кодекса РА установила лишь основы возвращения апелляционной жалобы, фактически не предусматривая возможность отказа принять ее. Причем из содержания кодекса следует, что апелляционные жалобы по имущественным спорам, не превышающим пятидесятикратного размера минимальной зарплаты, вообще не подлежат рассмотрению, а в тех случаях, когда был обжалован судебный акт, не подлежащий обжалованию, или жалоба была принесена лицом, не имеющим права на обжалование, суд возвращает жалобу.

В статье предложено разграничить правовые предпосылки апелляционного обжалования, а также условия реализации права на него. Нарушение предпосылок права на апелляционное обжалование приводит к отказу принять жалобу, так как это свидетельствует о том, что у данного лица отсутствует право апелляции. В случаях, когда нарушены условия реализации права на апелляционное обжалова-

ние, суд должен возвратить апелляционную жалобу, что не исключает возможности вновь представить ее суду. В заключение предложены соответствующие изменения и дополнения к гражданско-процессуальному кодексу РА.

VAHE HOVHANNISYAN – ***Civil Procedural Consequences of Noncompliance to the Order of Bringing an Appeal Claim.*** – In this article prerequisites and conditions of realization of the right to appeal claim are analyzed. Those are found to be separate legal categories and noncompliance to them should raise various legal consequences in civil procedure. However, Art. 213 of Civil Procedural Code of RA has only established the grounds of return of the appeal claim, thus not providing substantial opportunity to refuse acceptance of the claim. At the same time, it directly arises from the contents of the Code that appeal claims brought in relation to property disputes not exceeding fifty fold of minimum salary, are not subject to review. In cases when a judicial act not a subject to appeal review has been appealed, or the claim is brought by an entity not entitled to do so the Court of Appeals returns the claim.

Distinguishing between prerequisites and conditions of realization of the right to appeal claim is suggested in the present paper, thus separating their civil procedural consequences. Noncompliance with the prerequisites of the right of bringing an appeal should entail to refusal of acceptance of the claim as it proclaims the absence of the right to appeal claim. In cases of noncompliance with the conditions of realization of the right to appeal claim the court should return the claim which does not itself exclude the opportunity of resubmission of the claim to the court as the entity is entitled to bring an appeal though the latest has not followed the order of bringing an appeal prescribed by the law.

On the bases of above mentioned suggestions on making relevant amendments and addendums to the Civil Procedural Code of RA were elaborated.